**ՆԱԽԱԳԻԾ 243**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ----------ի ---- -ի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**Ն – Ն ՈՐՈՇՈՒՄ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով. ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածների, որից
1) եկամուտների գծով՝ 2.689.864,9 հազար դրամ:
2) ծախսերի գծով՝ 2.689.864,9 հազար դրամ:
3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ:
4) համայնքի բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի:
5) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:
6) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:
7) համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված 4-ի:
8) համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 5-ի:
9) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝
1) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև.
2) սահմանել՝ փոփոխությունների հանրագումարը տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ից:

2024 թվականի նոյեմբերի 28
ք.Արարատ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայքնի 2025թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով Արարատ համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագիրը և 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով: Որոշման նախագծի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմք է ընդունվել վերջին տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջեներ մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների տվյալները: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 2.689.864.9 հազար ՀՀ դրամ:

### 1. Բյուջեի վարչական մասի եկամուտների կանխատեսում

Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի կանխատեսված եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2.524.810.2 հազար դրամ, որն առաջանում է հետևյալ եկամտատեսակներից՝

ա) Հարկային եկամուտներ -516.075.0 հազ.դրամ

բ) տուրքեր –35.050.0 հազ.դրամ

գ) ) հողի և գույքի վարձավճար - 198.659.0 հազ.դրամ

դ) այլ եկամուտներ- 289.976.0 հազ.դրամ

ե) պաշտոնական դրամաշնորհներ (դոտացիա)- 1.485.050.2 հազ.դրամ

**2. Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտների կանխատեսում**

Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 795.054.7 հազ. դրամ, որն առաջանում է հետևյալ եկամտատեսակներից.

ա) Պաշտոնական դրամաշնորհներ (սուբվենցիա) – 65.054.7 հազ. դրամ

բ) Այլ մուտքեր - 730,000.0 հազ. դրամ, որտեղ օտարումից մուտքերը կազմում են 100.000.0 հազ.դրամ, իսկ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացումը բյուջեի ֆոնդային մասին կազմում է 630.000,0 հազ.դրամ:

**1. Բյուջեի ծախսերի կանխատեսում**

Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ծավալը ծրագրվել է 2.689.864.9 հազ. դրամի չափով: Արարատ համայնքի 2025թ-ի բյուջեի նախագծով կանխատեսված ընթացիկ ծախսերը (վարչական բյուջե) ունեն օրենքով սահմանված կարգով ՏԻՄ-ին վերապահված լիազորությունների իրականացման հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. Պետական կառավարման ապարատի պահպանման ընթացիկ ծախսերի ֆինանսավորում - 461.634.0 հազ. դրամ

2. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն - 426.756.3 հազ. դրամ

3. Նախադպրոցական դաստիարակության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում - 583.400.0 հազ.դրամ

4.Արտադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում - 142.676.0 հազ. դրամ

5.Արարատի մշակույթի և արվեստի կենտրոն -96.175.0 հազ.դրամ

6.Փողոցների լուսավորում-45.000.0 հազ.դրամ

7.Գույքի նպատակամբ իրավունքների ձեռքբերում - 15.500.0 հազ.դրամ

ա) Հարկային եկամուտներ -516.075.0 հազ.դրամ

բ) տուրքեր –35.050.0 հազ.դրամ

գ) ) հողի և գույքի վարձավճար - 198.659.0 հազ.դրամ

դ) այլ եկամուտներ- 289.976.0 հազ.դրամ

ե) պաշտոնական դրամաշնորհներ (դոտացիա)- 1.485.050.2 հազ.դրամ

**2. Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտների կանխատեսում**

Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 795.054.7 հազ. դրամ, որն առաջանում է հետևյալ եկամտատեսակներից.

ա) Պաշտոնական դրամաշնորհներ (սուբվենցիա) – 65.054.7 հազ. դրամ

բ) Այլ մուտքեր - 730,000.0 հազ. դրամ, որտեղ օտարումից մուտքերը կազմում են 100.000.0 հազ.դրամ, իսկ բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացումը բյուջեի ֆոնդային մասին կազմում է 630.000,0 հազ.դրամ:

**1. Բյուջեի ծախսերի կանխատեսում**

Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ծավալը ծրագրվել է 2.689.864.9 հազ. դրամի չափով: Արարատ համայնքի 2025թ-ի բյուջեի նախագծով կանխատեսված ընթացիկ ծախսերը (վարչական բյուջե) ունեն օրենքով սահմանված կարգով ՏԻՄ-ին վերապահված լիազորությունների իրականացման հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. Պետական կառավարման ապարատի պահպանման ընթացիկ ծախսերի ֆինանսավորում - 461.634.0 հազ. դրամ

2. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն - 426.756.3 հազ. դրամ

3. Նախադպրոցական դաստիարակության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում - 583.400.0 հազ.դրամ

4.Արտադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում - 142.676.0 հազ. դրամ

5.Արարատի մշակույթի և արվեստի կենտրոն -96.175.0 հազ.դրամ

6.Փողոցների լուսավորում-45.000.0 հազ.դրամ

7.Գույքի նպատակամբ իրավունքների ձեռքբերում - 15.500.0 հազ.դրամ

8.Խմելու ջրի մատարակարում -41.000.0 հազ. դրամ

9.Միջին մասնագիտական կրթություն - 500.0 հազ. դրամ

10.Բարձրագույն կրթություն-2.000.0 հազ. դրամ

11.Հանրակրթական ուսուցում-2.000.0 հազ. դրամ

12.Հուղարկավորության նպաստ բյուջեից -3.000.0 հազ.դրամ

13.այլ նպաստներ բյուջեից - 8.000.0 հազ. դրամ

14.Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին - 3.000.0 հազ.դրամ

15. Հրատարակչություններ, խմբագրություններ - 1.500.0 հազ. դրամ

16. Հեռուստառադիոհաղորդումներ - 800.0 հազ. դրամ

17. Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ - 9.000.0 հազ.դրամ դրամ

18. Կանաչ տարածքների պահպանում - 4.000.0 հազ. դրամ

19.Ռազմական պաշպանություն - 2.000.0 հազ. դրամ

20.Փողոցների պահպանում - 3.000.0 հազ.դրամ

21.Հանգստի և սպորտի ծառայություններ - 4.600.0 հազ.դրամ

22. Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ - 18.100.0 հազ.դրամ

23.Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր - 6.168.9 հազ.դրամ

24. Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ - 15.000.0 հազ.դրամ

Վարչական բյուջեով նախատեսվող ծախսերը կազմում են **1.888.641.3** հազ.դրամ, որի արդյունքում վարչական բյուջեի եկամտային մասում առաջանում է 636.168.9 հազ.դրամ հավելուրդ, որը ապահովելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջները նախատեսվում է ուղղել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ և դրանից 630.000,0 հազ. դրամը ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս կապիտալ ծախսերի ֆինանսավորման իրականացման նպատակով :

Նշված և մյուս ոլորտներում ծախսերը կանխատեսվել են հաշվի առնելով վերջին տարիների փաստացի ցուցանիշները և 2025թ-ի տարեկան աշխատանքային ծրագիրը:

Բյուջեի վարչական մասի ծախսերը կազմում են **1.894.810.2** հազ. դրամ: Բարեկարգ, հարմարավետ և մատչելի համայնք ձևավորելու նպատակով ծրագրվել են կատարելու հետևյալ կապիտալ աշխատանքները ֆոնդային բյուջեի միջոցներով՝

1. Գազաֆիկացման աշխատանքներ – 70.500.0 հազ.դրամ
2. Սպորտդպրոցի կառուցում- 50.000.0 հազ. դրամ
3. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում - 50.000.0 հազ. դրամ
4. Ճանապարհների վերանորոգում և պահպանում- 153.894.3 հազ. դրամ
5. Ջրահեռացման ցանցի վերանորոգում- 40.000.0 հազ. դրամ
6. Փողոցային լուսավորության կառուցում- 32.000.0 հազ.դրամ
7. Բազմաբնակարան շենքերի կառուցում – 89,500,0 հազ.դրամ
8. Բժշկական սարքավորումներների ձեռքբերում – 5.054.7 հազ.դրամ
9. Մշակույթի տների և հարակից այգու վերանորոգում – 90.000.0 հազ.դրամ
10. Մանկապարտեզների հիմնանորոգում – 130.000.0 հազ.դրամ
11. Փոսալցումներ -15.000.0 հազ,դրամ
12. Հանրակացարանների վերանորոգում – 20.000.0 հազ.դրամ (ք.Արարատ, ՈԿՖ)
13. Բակային հատվածների վերանորոգում – 25.000.0 հազ.դրամ
14. Արարատ քաղաքի կոմունալ տնտեսություն -21.105.7 հազ.դրամ
15. Արարատի համայնքապետարան – 3 000.0 հազ.դրամ

Արարատ համայնքի 2025 թվականի բոյուջեի վարչական մասի ծախսերը կազմում են՝ 1.894.810.2 հազ.դրամ, իսկ ֆոնդային մասի ծախսերը՝ 795.054.7 հազ.դրամ: Բյուջեի դեֆիցիտը (հավելուրդը) կազմում է 0,0 դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** _____ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի 2025 թ. բյուջեն մշակվել է Արարատ համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրի, 2025-2027թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2025թ. տարեկան աշխատանքային պլանի նախագծի հիման վրա, ինչպես նաև հաշվի են առնվել համայնքում ընդգրկված վարչական բնակավայրերում առկա խնդիրներն ըստ լուծման առաջնահերթության:

Համայնքի 2025թ. ծրագրային բյուջեի ձևաչափի ընտրությունը պայմանավորված է ծախսերի կատարման արդյունավետությամբ և վերջնական արդյունքների ստացմամբ:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումներն իրականացվում են յուրաքանչյուր մասի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք 2024թ. ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Բյուջեն պլանավորված է բարելավելու համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, նպաստելու համայնքի մեջ մտնող բնակավայրերի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկեցիկ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակական ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը և զարգացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի ավագանուն, հանրությանը, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքի կոմունալ ծառայությանը և համայնքապետարանի աշխատակազմին, ամենօրյա ակտիվ աշխատանքի և հասարակական գործունեության միջոցով իրականացնել 2025 թվականի բյուջեում նախատեսված ծրագրերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեն հաստատելու մասին» Արարատ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի անհրաժեշտություն չի առաջացել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՍՏԻՍՅԱՆ

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Հ/Հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխություն |
|---|---|---|---|---|
| | Ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով 28/11/2024 | Դիտողություններ և առաջարկություններ չկան | Ընդունվել է | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| Հ/Հ | Տեղեկատվության բնույթը | Տեղեկատվության բովանդակությունը |
|---|---|---|
| 1. | Տեղեկանքի վերնագիր | Տեղեկանք «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեն հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանրային քննարկման մասին |
| 2. | Հանրությանը իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ իրազեկումը | Հանրային քննարկման վերաբերյալ հանրության իրազեկումը կատարվել է հայտարարությամբ, որը փակվել է համայնքի տարածքում առկա ցուցատախտակներին, տեղադրվել է համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ https://araratcity.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=556 , ինչպես նաև Արարատի համայնքապետարանի facebook-յան էջում |
| 3. | Հայրային քննարկումների մասնակիցները | Քննարկումը տեղի է ունեցել «Արարատ համայնքի մշակույթի և արվեստի կենտրոն» ՀՈԱԿ-ի նիստերի դահլիճում՝ համայնքի ղեկավարի, վարչական ղեկավարների, համայնքապետարանի աշխատակիցների, համայնքի ավագանու անդամների, ՀՈԱԿ-ների տնօրենների և համայնքի բնակչության մասնակցությամբ |
| 4. | Հանրային քննարկման մասնակցության արդյունքները | Որոշեցին՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծին հավանություն տալ և գնահատել դրական |
| 5. | Այլ տեղեկությունը /եթե այդպիսիք առկա են/ | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք.Արարատ, Շահումյան 34, ժամը 17:00 28 նոյեմբեր 2024թ.

***Նիստին ներկա էին՝***

1. Գևորգ Մանուկյան
2. Մկրտիչ Մարտիրոսյան
3. Գարեգին Լևոնյան
4. Գեղամ Սինանյան

Հանձնաժողովի հրավերով նիստին մասնակցում էին՝
Կարեն Քենդրջյան ՝ համայնքի ղեկավարի տեղակալ
Հովհաննես Պողոսյան ՝ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Արմեն Մարտիրոսյան՝ աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ

ԼՍԵՑԻՆ՝ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թ. բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թ. բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծին և այն ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ - 4 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. Գևորգ Մանուկյան
2. Մկրտիչ Մարտիրոսյան
3. Գարեգին Լևոնյան
4. Գեղամ Սինանյան